

ԸՆԿԵՐ.—սենեակում միասին ապրելու համար:

Մեծ և լուսավոր սենեակ, պատուհանները փողոց վրայ, առանձին մուտք և բոլոր յարմարություններով Գարեխի է տեսնել առ. 7—8 Երեկոյան 7—9.

Вокзальная № 9 спросить Г. Терь-Галустова.

0—2

ԽՄԲԵՂԸՎԱԿՆ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՖՕՆԴԷ

Հայկական ապագրութեան 400-ամեակի և տասերի դի.տի 1500 ամեակի առիթով մեզանում հարց բարձրացաւ մի մեծ քաղաքաւորութեան գործ ձեռնարկել և այդպիսով անմահացնել այդ երկու նշանաւոր տարեգրածները: Առաջ եկան երկու կարևոր օրգաններ— դպրոց և գրականութիւն, որոնց համար նախկաւոր էր մի սպառնով ուղի գծել և նորանց զննլ վերջապէս բնականոն գարգացման ճանապարհի վրայ: Մի ապրիլ կեսնրի ամենամեծ արտաայտութիւնը գտնուում է այդ երկու խոշորագոյն գործօններէ մէջ: Առանց դպրոցի և առանց գրականութեան անկարելի է երեկպաւել մեծ ժողովուրդը Հայաստանի և այս ճյաւրտութիւնը ազանձապէս ճիշտ է մեզ համար, որ զրկուած ենք վաղուց քաղաքական անկախ կեանքից, զինտորական ոյժից և որ ապրում ենք միայն բարոյական արժէքներով: Մեր պատմական շարաւարտ անցեալում խոշոր պարտութիւններն ունեցանք մենք, կորցրինք շատ բան, և եթէ կարողացանք այնուամենայնիւ ազգերէ շարքում որեէ համեմատեալ պահել—այդ միայն ու միայն—չնորհիւ մեր դպրոցի և մեր գրականութեան:

Մենք պէտք է շատ լաւ հասկանանք, որ մեր գոյութեան խորհրդաւոր պրոբլեմը կազուած է ամենասերտ կապերով այդ երկու ազգակնրի նեւ: Նրանց իրականութիւնը մեր ազգային կեանքի, մեր բարոյական անկախութեան յետադիմութիւնն է նշանակում. նրանց կորուստը մեր հասարական կազմի անփառանակ զոգաբը կը լինի: Չենք ուզում այս սկզբունքային ծանրակշիւ հարցերի վրայ աւելի երկար կանգ առնել: Դիտակցում ենք, որ մեր ամենիւ համար պարզ է ու անխալայանի այս իրողութիւնը: Ո՛վ է այն միամիտը, որ համզուած լինի, թէ մենք կարող ենք առանց այդ գործօնների ապրել ազգերի հանդիսարանում, քայլիք քաղաքակրթութեան ժողովուրդների նեւ միասին: Ո՛վ է այն համարձակը,

որ կարողանայ պնդել, թէ առանց դպրոցի և առանց գրքի մեր գոյութիւնը չի խորտակուի եղբարականօրէն:

Բայց զիտանալով այս ճյաւրտութիւնները՝ մենք քիչ բան ենք անում: Նրանց—մեր գոյութեան այդ միակ գործօնները—պահպանութեան և ուժեղացման համար: Տեսէք ուրիշ փոքրիկ ազգերի հանապազօրեալ ճիղերը, տեսէք, թէ ինչ զօրոյսային պայմաններում և ինչ ներտակաւ պայքարով նրանք փրկուած են տիրապետողի կրունկների տակից իրենց լեզուն, իրենց գիրը, իրենց պատմութիւնը, կենքի, չէկերի և այլ նպատակ ազգութիւնների այդ տեսակ փառաւոր արարքները շատ յաճախ առտասպէլական բնոյթ ունին: Մե. գտնում սակայն մի չափաւոր կիրք անզամ չը կայ ղէպի այն հիմնարկութիւնը, որ անցեալի աղէտաւոր օրերում մեր ազգային ոյժի օբորանն է եղել և որ ապագայի փոթորկուտ տարիներում մեր յարատեւութեան գրականակնը պիտի լինի: Ի՞նչ ողորմելի ու անկենդան հոգեբանութիւն ենք հանդէս բերում առհասարակ և մանաւանդ այժմ, մեր քաղաքակրթական այս մեծ յորեկաններէ ժամանակ:

Մեր դպրոցները նեւորձեալ գոյուած են, մեր դասարանները նեւորձեալ գատարկուած են՝ և մենք անասան խաղաղութեանը դիտում ենք այդ հասար. այդ սարսափելի ղէպերը: Այսօր ղէպրոցական ֆոնդն է դրուած հրապարակել վրայ: Այսօր մեր վատարախո նախնիքների պատմական մեծանուն նուաճումների անմահացման խնդիրն է դրուած մեր սերնդի առջև, մեր արհեսաւորի, մեր գիրկացու, մեր բանուորի ու գրամատելի հանդէպ: Մի սերունդ, որ ապրում է համեմատաբար դիւրին ժամանակներէ մէջ և որ վայելում է համեմատաբար աւելի նեւթական բարեկեցութիւն—իրատուք ունի արդեօք անտարբերութեան գատապարտել այն, ինչ ստեղծուել է ազգային մեծ ճիղով, աւելի դժժան պայմաններէ մէջ, կործող ենք արդեօք սնայոյց աչքերով և անխոսով արամաղութեամբ դիտել հին շէնքերի աւերածը, հին արժէքների այդ ստորձան ողբերգական անկումը: Եթէ պատմական այս մեծ տօներն էլ չեն շարժում մեզ ազգովին և եթէ ներկայի վտանգաւոր նըշանները չեն զինաւորում մեզ յանուն մեր ինքնուրայնութեան—այլ ու երբ պէտք է շարժուիք մենք և ինչով պէտք է երակոտաւոր անուն թողնենք մեր յետորդ սերունդներին, մեր ապագայ պատմութեան մէջ:

Ժողովրդական դպրոցի ապահովութեան գործը էապէս և հիմնապէս ապահովարական աշխա-

տանք է: Նրա յաջողութեան հարցը—մեր բովանդակ կաւտարայի խնդիրն է: Մեր հասարակութեան բոլոր խաւերն էլ կարող են միասնալ այդ հարցի շուրջը և կատարել միասնաբար մի անընթեշտ, մի անյետաձգելի գործ, որ գերակացութեան դիմօրեարարական է և խորապէս ազգային միաժամանակ:

ԳՐԱԿԱՆ ՖՕՆԴԷ

Գպրոցական ֆոնդի նեւ միասին հրապարակ է եկել նաև գրական ֆոնդը: Մեր լրագրութեան մէջ մի տարբերակ բանալէճ առաջացաւ այն մասին, թէ հարկաւոր է արդեօք գրական ֆոնդի համար աշխատել և թէ լաւագոյն չէ արդեօք ամեն ինչ նուիրարելի դպրոցականներն եթէ այս տեսակէտներն արտայայտուէին միանգամայն անկեղծօրէն և առանց անարժան կշռադատումների, — դեռ կարելի էր հասկանալ և մինչև իսկ մասամբ արդարացել: Բայց այդ միտքը շատ ջգանտու ձևով արժարժուեց և մամուլի որոշ օրգանի մէջ դարձաւ մի տեսակ անպատեւ արաւանք գրականութեան ու գրականների ղէմ:

Հայ գրքի տօնին կարելի էր միթէ այդքան յախուռ վերաբերուէք ցոյց տալ ղէպի այն մարմին, որոնք ամենից շատ աշխատել են այդ գրքի ազնուացման ու կատարելութեան համար: Բայց մեր ծանր իրականութեան մէջ այդ սեր կեղտիլը հարկաւոր է գտնուում և շատ ղեմաններում համարուում է մինչև իսկ հասարակական առաջնութիւն:

Դիտեցէք տասնիններորդ դարի մեր վերածնութեան ամբողջ շրջանը, նկատի առէք այն դժուարին ճանապարհը, որով անցանք մենք ղէպի մտաւոր ու բարոյական նորագոյն արժէքներ: Ո՛վ էր քայլում մեր ժողովրդի առջեկց և ո՛վ էր նրան ղէպի գիտութիւն ու զիտակցութիւն տանում: Մի Արովան, մի Նարեկեան, մի Բաֆֆի և ուրիշ շատերը խորապէս արտայայտելով դարի պահանջներն ու ժողովրդական մեծ իրէպները՝ եղակական զեր կատարելին մեր ազգային ու հասարակական առաջգիտութեան գործում: Կարելի է երևակայել հայկական մտաւոր վերածնութիւն առանց այդ փայլուն աշխատաւորների, որոնք ամենագաւն պայմաններում և անախելի նեղութիւններով լծուեցին մեր ժողովրդական կարգին ու անցեցին այն անշարժութեան փոսկից:

Եւ ինչ կեսնք ունի մեզանում այն անձը, այն երակոտաւոր անհատը, որ իր գիտութեան, տաղանդի ու անձնութեան ուժով բարձրացնում է մեր ամենիւ մակարդակը և դնում է մեզ

կատարելութեան շաղուի վրայ: Բնագրի տարօրինակ հակասութիւն: Նրանք սպրոււմ են մոռացուած ու լքուած:

Նրանք քարշ են տալիս յաճախ մի ողորմելի գոյութիւն, որ անպատուարեր է մեզ համար և խորապէս ողբերգական նրանց համար: Մի գիտակից ժողովրդի մէջ այս գրութիւնը չպիտի հանրութուի: Այտք է թողնել միթէ, որ յախտեան շարունակուի այս անկարելի մարտիրոսութիւնը:

Այսօր երբ ուսանայ գրակաշուքեան սկզբնաւորութիւնից անցել է մօտ երեք քառորդ դար—մեր գրողը աշխատում է տակաւին առանց վարձատրութեան: Մեր գիրքը, մեր գրականութիւնը գտնուում են տակաւին ողբալի կացութեան մէջ: Տարիներ շարունակ մտածել ենք վանքերի և եկեղեցիների մասին: Մեր հաւաքական եռանդը շատ երկար ժամանակ սպասել ենք կրօնական միջավայրում և մոռացել ենք, որ նոր պայմանները ուրիշ բան են թելագրում: Գրականութիւնը եղել է անուշադրութեան առարկայ և մասնուեղ է կատարեալ անոգութեան: Մինչդեռ նրա միջոցով է տեղի ունեցել մեր կեանքի վերածնութեան խոշոր բաժինը: Ինչ որ չէին կարողանում տալ աստուածաբաններն ու եկեղեցին՝ կարողանում էին գրականներն ու գրականութիւնը: Բայց մենք մի գործմանով հնամուտութեամբ բրնուած, մի օտարոտի ւսանողականութեամբ պաշարուած՝ չէինք կամենում նոր ժամանակի իմաստը հասկանալ: Եւ զիւղացի ու քաղաքացի, տրեւտաւոր ու վաճառական, աղքատ և հարուստ իրենց նիւթական ունեցուածքից շատ բան էին զոհարեցրում քա-

տուածահանոյ ճիջնարկութիւններին, որոնց օգոււան ու հասարակական արժէքը մեծապէս սրօրելմատիք էին:

Այժմ արդէն ժամանակն է, որ մենք թօթափենք անցեալի այդ տխուր բեռը և գիտակցենք նոր կեանքի հրամայականը: Մի ազգ, աղօթքով ու սաղմոսերգութեամբ չի վերածնոււմ: Հարկաւոր է մեզ առոյգ միտք, առողջ գաղափար, աննախապաշար գիտակցութիւն, որպէսզի կարողանանք լաւապէս տեսնել մեր անցնելիք ուղին և մեր կեանքի հեռաւոր ճամբան: Իսկ այս բոլորը տալիս է մեզ գրականութիւնը, տալիս են մեզ լուսամիտ ու պայծառատես գիտնականները: Հայոց գրքի ու հայոց գրականութեան այս պատմական մեծ տօներին չպիտի վերջապէս սթափուենք մեր շարաւրթմբուքութեանց, ու չպիտի սկիզբ դնենք մի նոր դարագլխի: Գրական ֆօնդը նոյնքան անհրաժեշտ, նոյնքան անյուսածգելի է ուրեմն մեր կեանքի համար, որքան դպրոցականը: Հայ հասարակութիւնը ամենուրեք, զիւղերում թէ քաղաքներում, պիտի գիտակից այս քաղաքակրթական յօրեկանները բովանդակ նշանակութիւնը և պիտի լցուի գրական ու դպրոցական վերանորոգութեան անխախտ պահանջով: Ժողովրդական գործի հանդէպ պէտք է ամբողջ ժողովուրդը շարժուի: Միթէ չի կարելի մի համազգային ներդաշնակութիւն ու մի ընդհանուր համբաշխութիւն առաջ բերել յանուն մեր դպրոցների ու մեր գրականութեան, որոնք քաղաքակրթական խոշոր գործմաներ են և որոնք այդ ընդթօնի իսկ ծառայելու են ամենին անխախտ:..